ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«12» օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դավիթյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (08.08.2024թ.)՝ ժամը 15:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 09.08.2024թ.՝ ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի (փաստաթղթերի ոչնչացման սարքերի) գնման գնի վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է, որ ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր (գործարք) առկա չէ:

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ	ք. Վաղարշապատ 1101, Մռավյան փ. 40Ա
ՀՈՎ-ԱՐՍ ՍՊԸ	Նոր Խարբերդ 2փ, 52 5բն
«Դ-Քոմփանի» ՍՊԸ	ք. Տաշիր, Գետափնյա փ. շենք 13, բն. 3
«ԱՐԴՄՈՐ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ	ՀՀ, 0038, Երևան, Աբելյան փող., 6/4 շենք, TGA Բիզնես Կենտրոն 3-րդ հարկ, 310 սենյակ
«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
Ա/Ձ Արամայիս Եպիսկոպոսյան	ք. Բյուրեղավան, 1-ին թղմ, 102, բն 5
Լայթսպորտ ՍՊԸ	ք. Երևան, Ներքին Շենգավիթ 17 փ.
ՏՆՄ ՍՊԸ	ՀՀ Երևան, Օրբելի 33Ա, 15
«ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ	ք. Երևան, Բաղրամյան 1 փկղ., 142., 147 բն

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/21» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ	19999000	20%	23998800	3800000	20%	4560000.00	
1	ՀՈՎ-ԱՐՍ ՍՊԸ	4625000	20%	5550000	3991000	20%	4789200.00	
1	«Դ-Քոմփանի» ՍՊԸ	65895458	20%	79074549.6	4207500	20%	5049000.00	
1	«ԱՐԴՄՈՐ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ	9000000	20%	10800000	9000000	20%	10800000.00	

1	«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ	19000000	20%	22800000	19000000	20%	22800000.00	
1	Ա/Ձ Արամայիս Եպիսկոպոսյան	24900000	0%	24900000	24900000	0%	24900000.00	
1	Լայթսպորտ ՍՊԸ	50000000	20%	60000000	50000000	20%	60000000.00	
1	ՏՆՄ ՍՊԸ	50000000	20%	60000000	50000000	20%	60000000.00	
1	«ՏԵՆԴԵՐ ՊՐՈ» ՍՊԸ	200000000	20%	240000000	200000000	20%	240000000.00	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 09.08.2024թ.՝ ժամը 15:30-ին և «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. օգոստոսի 13-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Անդրանիկ Աբգարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան